ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

27.02.2025թ. կնքված № ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/14-2 ծածկագրով պետության կարիքների համար տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

«20» մարտի 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն՝ ի դեմս խոշոր կազմակերպությունների և պետական սեկտորի գծով վաճառքի բաժնի ղեկավար Վ. Այվազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և 27.02.2025թ. կնքված N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/14-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 3.1 կետի 2-րդ պարբերության «Կատարողը ծառայությունը մատուցելու համար հանձնման-ընդունման արձանագրությունները ներկայացնում է յուրաքանչյուր եռամսյակի համար առանձին: Յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, իսկ 4-րդ եռամսյակի համար՝ 29.12.2025թ.-ին» բառերը փոխարինել «Յուրաքանչյուր ամսվա մատուցված ծառայության համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ 29.12.2025թ.-ին» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. 27.02.2025թ. կնքված N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/14-2 ծածկագրով պետության կարիքների համար տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պետական գնման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք.Աբովյան,խաղաղության 1
ՀՎՀՀ՝ 02629081	ՀՎՀՀ՝ 00096001
Հ/Հ՝ 900011018539	Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1930011980040100
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի	Խոշոր կազմակերպությունների պետական
պարտականությունները կատարող՝	սեկտորի գծով վաճառքի բաժնի
	ղեկավար՝
---------- Ա. Եսայան	---------- Վ. Այվազյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ